Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Պրո Շին ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Կադաստրի կոմիտեի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Ռաֆ Օջախ» ՍՊ ընկերության՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի «դեկտեմբերի» «8» «N1» որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիսվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի «դեկտեմբերի» «8» «N1» որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիսվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE01-702A-46E2-AE10 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am